ԱՐՑԱԽՈՒՄ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԱՐՑԱԽԸ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ Է ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ուղղաթիռները մեկը մյուսի հետևից վայրէջք են կատարում Արցախի ադրբեջանաբնակ գյուղերում: Վայրէջք են կատարում ցանկացած ժամին, ցանկացած ուղերթով՝ առանց արգելքի, առանց ստուգման: Թե ինչ են տեղափոխում՝ միայն իրենք գիտեն, մեկ էլ՝ աստված: Ոչ ոք իրավունք չունի ստուգելու տեղափոխվող բեռները, նույնիսկ հետաքրքրվի այդ բեռների պարունակությամբ: Ադրբեջանում ամենագերադասը, աստվածների աստվածը հիմա նրա ժողովրդական ճակատն է՝ Նորին մեծությունը: Եվ բեռնատար ավտոշարասյուները զինվորական տեխնիկայի և զինված մարտիկների ուղեկցությամբ հայկական գյուղերի միջով շարժվում են ադրբեջանաբնակ գյուղերը: Նրանց համար տանում են այնպիսի սննդամթերք, որի մասին ադրբեջանցի գյուղացին ոչ լսել էր և ոչ էլ տեսել՝ բազմապիսի պահածոներ, քաղցրավենիք, հյութեր, շաքար ու բրինձ, դեֆիցիտային արտասահմանյան ապրանքներ, հագուստեղեն, կտորեղեն..., բավարարում են նրանց ամեն ինչով, միայն թե չլքեն իրենց գյուղերը: Բերում են շինանյութեր, կահույք... միայն թե կառուցեն շա՛տ տներ, վերաբնակեցվեն հանրապետությունում գտնվող կես միլիոնից ավելի անաշխատանք, անտուն ադրբեջանցիներին: Սկզբունքը մեկն է՝ Լեռնային Ղարաբաղը որքան հնարավոր է շատ ադրբեջանականացնել, ադրբեջանցիների թիվը Արցախում շատացնել:

Իսկ Հայաստանի սահմանից Արցախ թռչող թռչունն անգամ ստուգվում է, ստուգվում են նրա բոլոր փետուրները՝ հանկարծ «վտանգավոր» փետուր չի՞ տեղափոխվում Արցախ: Ստուգվում են մայր Հայաստանից արցախյան գյուղերը սննդամթերք տեղափոխող ուղղաթիռները: Ամեն անգամ զինվորական կարգախմբերը, ներքին գործերի բաժնի ծառայողները հասնում, մեկ առ մեկ ստուգում են բերված սննդամթերքը: Այդպես է հրահանգված նրանց: Ու ամեն անգամ մի առիթ են փնտրում արգելակել Հայաստանից Արցախ կատարվող թռիչքները, խափանել նյութական ծանր կարիքի մեջ գտնվող արցախահայության միակ «կյանքի ճանապարհը»: Համենայն դեպս՝ այդպես է ստացվում:

Արցախի հայ բնակչությունը, իրոք, ծայրաստիճան դժվարությունների մեջ է: Հեշտ է ասել՝ քսան ամսից ավելի է, ինչ մարզը շրջափակման մեջ է, կտրված արտաքին աշխարհից, լի անտուն, անօթևան գաղթականներով: Իսկ այդ ո՞վ կարող է առանց դրսի հետ կապ ունենալու գոյությունը երկար պաշտպանել: Արցախահայությունը քսան ամսից ավելի է՝ ապրում է իրեն իրենով: Բայց մինչև ե՞րբ...

Եթե չլիներ մայր Հայաստանի հոգատար ձեռքը, ազգանվեր մարդկանց գթությունը, ո՞վ է իմանում՝ այսօր ինչպես կլիներ արցախցիների վիճակը:

Սկսվել են ցուրտ եղանակները: Երկինքը հաճախ է ամպակալում, և դրա հետ փակվում է արցախցիների միակ ճանապարհը, կյանքի՝ ճանապարհը: Հաղթահարելով բոլոր դժվարությունները, ուղղաթիռները Հայաստանից գալիս են, հա գալիս, բերում սննդամթերք, առաջին անհրաժեշտության ապրանքներ, դեղորայք, որի կարիքը արցախահայությունը այսօր ավելի շատ է զգում:

Հայաստանում, նրա քաղաքներում ու գյուղերում այս օրերին արցախահայության օգնության համար ծավալվել է բարեգործական լայն շարժում: Նրանք մեծ օգնություն են ցույց տալիս Հադրութի շրջանի հատկապես ծայրամասային գյուղերին՝ Առաքյալին, Դրախտիկին, Ծամձորին, Վարդաշատին... Այդ օգնության շնորհիվ է, որ Դիզակի հայությունը կանգուն է պահում իր պապենական հողը: Ուղղաթիռները սննդամթերքներ են հասցնում Մարտակերտի շրջանի Առաջաձորի, Վանքի, Ծմակա-Հողի, Վաղուհասի, Գառնաքարի և մյուս գյուղերի բնակիչներին: Գյուղի մարդիկ մեծ գոհունակությամբ են խոսում մայր Հայաստանի այն ձեռնարկությունների կոլեկտիվների մասին, որոնք անհատույց օգնություն են ցույց տալիս շրջափակման մեջ գտնվող, պաշարված գյուղերի հայ բնակչությանը: Այս օրերին հայրենասիրական զգացմունքով և սրտի կանչով Հայաստանի քաղաքներում բնակվող արցախցիներն ստեղծել են այսպես կոչված արցախյան համայնքներ, որոնք հանգանակած գումարներով իրենց հայրական գյուղի բնակչությանն են հասցնում զանազան տեսակի սննդամթերք: Հրազդանի ցեմենտի գործարանի կոլեկտիվը միայն հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին վեց ուղղաթիռ սննդամթերք ուղարկեց Մարտունի քաղաքի բնակչության համար: Սննդամթերքներ են ուղարկվել Երևանի «Պոլիվինիլացետատ» միավորման աշխատողները Մարտունու շրջանի Կաղարծու, Պարույր Սևակի անվան և Պառավաթումբի «Նոր կյանք» կոլտնտեսությունների համար: Այս կոլտնտեսությունների երախտավոր գյուղացիները այդ նույն ուղղաթիռով Երևանի իրենց բարեգործների համար ուղարկեցին մի քանի տոննա ընկույզ, տանձ ու խնձոր... գյուղի մարդիկ են՝ ինչով կարող են, ինչ ունեն: Այդպես վարվեցին Հաղորտի, Մուշկապատ, Թաղավարդ և մյուս գյուղերի բնակիչները: Ի՞նչ է նրանց պետք. այն, ինչ գյուղում չկա, բայց անհրաժեշտ է. շաքար, օճառ, ձեթ, դպրոցական պիտույքներ և այլն: Պարզապես եղբայրական ձեռք:

Ադրբեջանի «ինտերնացիոնալիստ» ղեկավարությունը տարիների ընթացքում «եղբայրական» ձգ[illegible]ներով Արցախի բոլոր խոշոր [illegible]տեսությունների ու կոլտնտ[illegible]ությունների հացահատիկը կենտ[illegible]նացրել և տվել է Աղդամ քաղաքի էլեկտրական ալրաղացին, [illegible] ղից էլ պետք է բոլոր գյուղերի ստանելիք ալյուրը առաքվեր: Ի[illegible]մա լավ «առաքվում է»: Գյուղերը մնացել են առանց ալ[illegible] անասունները՝ առանց խոտ[illegible] կերերի. Արցախի [illegible] կախման մեջ են թողնված հարևան ադրբեջանական շրջաններից, [illegible] կենտրոնացվել են Արցախի [illegible]րիքները, հարստությունը: Սակայն այսօր դրանք արցախցիներին չեն լիցքաթափել: Դարձի են դրվել մեր հին, պապենական ջրաղացները: Արցախցին միշտ ունեցել է իր հո[illegible]ղեպահուստը, և նա երբեք չի [illegible]կրճվի նյութականի համար:

Արցախահայության մեջ այսօր խիստ զայրույթ են առաջ բերել Ադրբեջանում ստեղծված «Ղարաբաղին՝ ժողովրդական օգնություն» կոմիտեի սանձարձակ ու սուտ գործողությունները, որը արցախահայությանը զրկելու համար Արցախի ադրբեջանական գյուղերի համար արտակարգ օգնություն և միջոցներ է հատկացնում, մեծ չափերով շինանյութ, արդյունաբերական և պարենային ապրանքներ է տրամադրում: Այդ ամենը միայն ու միայն արվում է պրովոկացիաների համար, հայերին համբերությունից հանելու համար: Դա միայն կարելի է որակավորել որպես «հոգեբանական ավանտյուրա», մի նոր պրովոկացիոն ակտ՝ հայերին ներառնելու սադրիչների մարտահրավերի մեջ: Սակայն արցախցիները կարողանում են պահել իրենց հավասարակշռությունը, չեն ներքաշվում հոգեբանական այդ հարձակումներին: Քսան ամսից ավելին է՝ արցախահայությունը սրբնային պայմաններում է, ոտնահարվում է նրա ազգային արժանապատվությունը: Մարդիկ ինչ-որ տեղ կորցրել են հավատը, հիասթափված են կենտրոնի զարմանալի անտարբերությունից:

Այսօր Արցախը շնչում է մայր Հայաստանի, նրա քաղաքների՝ Երևանի, Աբովյանի, Հրազդանի, Կամոյի, Վարդենիսի... մայր Հայաստանի, աշխարհի ողջ հայության շնչով, որի ամենօրյա ուշադրությունը հառված է դեպի Արցախ, օգնում է արցախահայությանը ինչով կարողանում է, ինչպես կարողանում է:

Արցախը երախտապարտ է հայ ժողովրդին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ
(մեր սեփ. թղթակից)